

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2019 թվականի Պրոբացիայի ծառայության իրականացրած գործունեության վերաբերյալ)

Պրոբացիայի ծառայությունը 2019թ. ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ գործունեությունը՝

1. Պրոբացիայի ոլորտին առնչվող օրենսդրական բարեփոխումներ

ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի մարտի 28-ի թիվ 98-Ա հրամանով ներդրվել է ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շահառուի ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը, որը հնարավորություն է տալիս վեր հանելով շահառուի ռիսկերը ու պահանջմունքները վերասոցիալականացման գործընթացը դարձնել առավել թիրախավորված և նպաստելու կրկնահանգագործությունների նվազեցմանը:

2. Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և հասարակություն վերահանդերձման նպատակով 595 շահառուների համար իրականացվել են 55 միջոցառումներ, մասնավորապես՝

1. ՀՀ արդարադատության նախարարի 05.02.2019թ. N 32-Ա հրամանով հաստատված «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրով վերապատրաստվել են **6 շահառու**՝ անգլերեն (2), համակարգչային դասընթացներ (2) և բիզնեսի գրագիտություն (2) ուղղություններով:
2. Պրոբացիայի ծառայության պետի ցուցումով ծառայության Երևանի քաղաքային մարմնի բաժնում հաշվառված **46** շահառուի համար իրականացվել է վերասոցիալականացման ծրագիր, որը ներառել է հինգ հանդիպում՝ ուղղված անձի հոգեբանական խնդիրներին, շահառուների իրավագիտակցությանը և պրոբացիայի ոլորտին առնչվող գիտելիքների բարձրացմանը:
3. Պրոբացիայի ծառայության Արարատի մարզային բաժնում հաշվառված **3** շահառու ուղղորդվել են Արտաշատի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն և զբաղվածության տարածքային կենտրոն, իսկ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժնում հաշվառված **5** շահառու հանդիպել են Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի աշխատակիցների հետ:
4. Պրոբացիայի ծառայության Երևան քաղաքային մարմնի թվով **10** շահառու ուղղորդվել են «Խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական հայկական կենտրոն»՝ անհրաժեշտ վերականգնողական աջակցություն ստանալու նպատակով: Վերոնշյալ շահառուները ստացել են առողջական (5), փաստաթղթերի հետ կապված խնդիրների լուծման (4), աշխատանքի ձեռքբերման (1) աջակցություն:

- **Մշակութային միջոցառումներին** մասնակցել է **310 շահառու** (Սյունիք-99, Լոռի-66, Երևան-6, Շիրակ-40, Վայոց Ձոր-18, Գեղարքունիք-24, Արմավիր-15, Արարատ-42), մասնավորապես՝
- 1) 20.02.2019թ. Սյունիքի մարզային բաժնում հաշվառված **12** շահառու այցելել են Ակսել Բակունցի տուն-թանգարան:
 - 2) 20.02.2019թ. Լոռու մարզային բաժնում հաշվառված **12** շահառու դիտել են «Չառլիի մորաքույրը» թատերական ներկայացումը:
 - 3) 08.03.2019թ. Սյունիքի մարզային բաժնում հաշվառված **8** շահառու և նրանց ընտանիքի անդամները ներկա են գտնվել կանանց տոնին նվիրված տոնական համերգին:
 - 4) 10.03.2019թ. Երևան քաղաքային մարմնի բաժնում հաշվառված **6** կին շահառու ներկա են գտնվել կանանց տոնին և Հ. Թումանյանի 150-ամյակին նվիրված Հայաստանի պարի պետական անսամբլի համերգ-երեկոյին:
 - 5) 06.04.2019թ. Շիրակի մարզային բաժնում հաշվառված **8** շահառու և նրանց ընտանիքի անդամները դիտել են «Հարսանիք թիկունքում» ներկայացումը:
 - 6) 27.04.2019թ. Սյունիքի մարզային բաժնում հաշվառված **17** շահառու և նրանց ընտանիքի անդամները մասնակցել են Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումներին:
 - 7) 09.05.2019թ. Սյունիքի մարզային բաժնում հաշվառված **22** շահառու մասնակցել են մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումներին:
 - 8) 17.05.2019թ. Վայոց ձորի մարզային բաժնում հաշվառված **4** շահառու Եղեգնաձոր քաղաքում ներկա են գտնվել թատերական ներկայացմանը:
 - 9) 22.05.2019թ. Սյունիքի մարզային բաժնում հաշվառված **4** շահառուի համար ճանաչողական էքսկուրսիա էր կազմակերպվել Նիկողայոս Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան:
 - 10) 30.05.2019թ. Լոռու մարզային բաժնում հաշվառված **5** շահառուի և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ ճանաչողական այցելություն է կատարվել «Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ:
 - 11) 08.06.2019թ. Գեղարքունիքի մարզային բաժնում հաշվառված **9** շահառու Սևան քաղաքի «Բոհեմ» արվեստանոց-թեյարանում հանդիպել են մարզում գործող հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ:
 - 12) 08.07.2019թ. Սյունիքի մարզային մարմնում հաշվառված **7** շահառու ներկա են գտնվել Սահմանադրության օրվան նվիրված «Արմենիա» համույթի մենահամերգին:
 - 13) 11.07.2019թ. Արմավիրի մարզային մարմնում հաշվառված **7** շահառու ճանաչողական այցելություն են կատարել Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարան:
 - 14) 12.07.2019թ. Լոռու մարզային մարմնում հաշվառված **5** շահառու և 1 անչափահաս շահառու ծնողի ուղեկցությամբ, դիտել են «Վարազդատ» թատերական ներկայացումը:
 - 15) 17.07.2019թ. Սյունիքի մարզային մարմնում հաշվառված **12** շահառու մասնակցել են Կապան քաղաքի օրվան նվիրված տոնակատարություններին:
 - 16) 19.07.2019թ. Շիրակի մարզային մարմնում հաշվառված **5** այցելել են Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան:

- 17) 25.07.2019թ. Շիրակի մարզային մարմնում հաշվառված **7** շահառու և նրանց ընտանիքի անդամները մասնակցել են Գյումրի քաղաքի օրվան նվիրված տոնակատարություններին:
- 18) 30.08.2019թ. Արարատի մարզային մարմնում հաշվառված **12** շահառու այցելել են Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան:
- 19) 04.09.2019թ. Վայոց ձորի մարզային մարմնում հաշվառված **4** շահառու այցելել են Եղեգնաձորի երկրագիտական թանգարան:
- 20) 06.09.2019թ. Արմավիրի մարզային մարմնում հաշվառված **8** շահառուի համար ճանաչողական էքսկուրսիա էր կազմակերպվել Էջմիածնի «Մաշանենց» արվեստի տուն:
- 21) 06.09.2019թ. Վայոց ձորի մարզային մարմնում հաշվառված **4** շահառու մասնակցել են Գլաձորի համալսարանի հիմնադրման 735 ամյակին նվիրված տոնական միջոցառմանը:
- 22) 11.09.2019թ. Գեղարքունիքի մարզային մարմնում հաշվառված **6** շահառու այցելել են «Սևան» ազգային պարկի բնագիտական թանգարան:
- 23) 14.09.2019թ. Լոռու մարզային մարմնում հաշվառված **7** շահառու մասնակցել են Վանաձոր քաղաքի ամենամյա 18-րդ «Մարզական փառատոն» միջոցառմանը:
- 24) 20.09.2019թ. Լոռու մարզային մարմնում հաշվառված **6** շահառու այցելել են «Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ:
- 25) 21.09.2019թ. Շիրակի մարզային մարմնում հաշվառված **7** շահառու իրենց ընտանիքների անդամների հետ միասին մասնակցել են սեպտեմբերի 21-ին Անկախությանը նվիրված տոնական միջոցառումներին:
- 26) 21.09.2019թ. Գեղարքունիքի մարզային մարմնում հաշվառված **9** շահառու մասնակցել են Սևան քաղաքում կազմակերպված ՀՀ Անկախության հռչակման 28-րդ տարեդարձին նվիրված տոնակատարությանը:
- 27) 21.09.2019թ. Սյունիքի մարզային մարմնում հաշվառված **17** շահառու իրենց ընտանիքների անդամների հետ միասին մասնակցել են Երկրապահ կամավորների միության (ԵՄԿ) Գորիսի բաժանմունքի շտաբի վերաբացմանը, ինչպես նաև փառքի սրահի, հուշատախտակի և հուշաղբյուրի բացման արարողությանը:
- 28) 29.09.2019թ. Լոռու մարզային մարմնում հաշվառված **4** շահառու ներկա են գտնվել «Լոռի բերդ քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցում կազմակերպված «Բագրատունյաց ժառանգություն» խորագիրը կրող միջոցառմանը:
- 29) 25.09.2019թ. Արարատի մարզային մարմնում հաշվառված թվով **10** շահառու, Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի միջև կնքված հուշագրի շրջանակներում, դիտել են Վ.Օվյանի «Ավելի շատ լույս» ներկայացումը:
- 30) 04.10.2019թ. Լոռու մարզային մարմնում հաշվառված թվով **4** շահառու մասնակցել են Վանաձոր քաղաքի Հայքի հրապարակում տեղի ունեցած աշխատանքի տոնավաճառին:

- 31) 15.10.2019թ. Արարատի մարզային մարմնում հաշվառված թվով **10** շահառու դիտել են «Ազնիվ գողեր» ֆիլմը:
- 32) 17.10.2019թ. Շիրակի մարզային մարմնում հաշվառված թվով **15** շահառու մասնակցել են Վլադիմիր Ավետիսյանի և D'Black Blues Orchestra միջազգային խմբի բացօթյա համերգին:
- 33) 26.10.2019թ, Լոռու մարզային մարմնում հաշվառված թվով **10** շահառու ներկա գտնվեցին Վանաձորի օրվան նվիրված համաքաղաքային միջոցառմանը:
- 34) 13.11.2019թ. Վայոց ձորի մարզային մարմնում հաշվառված թվով **6** շահառու մասնակցել են Արցախի Ձայներ» խմբի համերգին:
- 35) 29.11.2019թ. Լոռու մարզային մարմնում հաշվառված թվով **7** շահառու ներկա գտնվեցին «Փախիր կնոջիցդ» թատերական ներկայացմանը:
- 36) 04.12.2019թ. Արարատի մարզային մարմնի թվով **10** շահառու դիտեցին Ալ. Շիրվանզադեի «Արտիստը» թատերական ներկայացումը:
- 37) 12.12.2019թ. Լոռու մարզային մարմնի աշխատակիցները և մարմնում հաշվառված թվով **5** պրոբացիայի շահառու, մասնակցեցին «Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված խեցեգործական նմուշների ցուցադրության նորաբաց սրահի բացման միջոցառմանը:

➤ **Մարզական միջոցառումներին** մասնակցել է **71** շահառու (Երևան-60, Լոռի-1, Վայոց ձոր-10), մասնավորապես՝

- 1) 18.02.2019թ. Լոռու մարզային բաժնում վերահսկողությամբ հաշվառված անչափահաս **1** շահառու ընդգրկվել է ծանրամարտի խմբակում:
- 2) 26.03.2019թ. Երևանի քաղաքային մարմնի բաժնում հաշվառված **20** շահառու հետևել են ֆուտբոլի Եվրոպայի 2020 թվականի առաջնության ընտրական փուլի Հայաստան-Ֆինլանդիա հանդիպմանը:
- 3) 08.06.2019թ. Երևանի քաղաքային մարմնի բաժնում հաշվառված **20** շահառու հետևել են ֆուտբոլի ԵՎՐՈ-2020-ի ընտրական մրցաշարի J խմբի երրորդ տուրի Հայաստան-Լիխտենշտեյն հանդիպմանը:
- 4) 12.07.2019թ. Վայոց ձորի մարզային մարմնում հաշվառված **10** շահառու ֆուտբոլային ընկերական հանդիպում են ունեցել ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության աշխատակիցների հետ:
- 5) 26.03.2019թ. Երևանի քաղաքային մարմնի մարմնում հաշվառված **20** շահառու Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում դիտել են Հայաստան-Իտալիա ֆուտբոլային հանդիպումը:

➤ **Եկեղեցի այցելություն՝ 43** շահառու (Գեղարքունիք-17, Արարատ-11, Արագածոտն-12, Վայոց ձոր-3), մասնավորապես՝

- 1) 25.02.2019թ. Գեղարքունիքի մարզային բաժնում հաշվառված **17** շահառու այցելել են Սևան քաղաքի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի և մասնակցել պատարագի արարողությանը:

- 2) 29.03.2019թ. Արարատի բաժնում հաշվառված **11** շահառու այցելել են Խոր Վիրապի վանք:
- 3) 31.05.2019թ. Արագածոտնի մարզային բաժնում հաշվառված **12** շահառու այցելել են Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցի:
- 4) 01.09.2019թ. Վայոց ձորի մարզային մարմնում հաշվառված **3** շահառու այցելել են Եղեգնաձոր քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցի և մասնակցել են կիրակնօրյա Սուրբ պատարագին:

Այլ միջոցառումներ՝

- 23.03.2019թ. կազմակերպված **համապետական շաբաթօրյակին** մասնակցել է **43 շահառու** (Արարատ-13, Գեղարքունիք- 10, Սյունիք -10, Լոռի-7, Վայոց Ձոր-3)
- 03.07.2019թ. Սյունիքի մարզային մարմնում հաշվառման մեջ գտնվող և նոր հաշվառման վերցված **12** շահառուների համար կազմակերպվել էր վերասոցիալականացմանն ուղղված հանդիպում, որի ընթացքում ներկայացվել են ծառայության հիմնական խնդիրները, նպատակներն ու գործառույթները, շահառուների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ՀՀ քրեական, քրեակատարողական օրենսգրքերի և «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի դրույթները:
- 07.12.2019թ. Սյունիքի մարզային մարմնի աշխատակիցները և Գորիս քաղաքում հաշվառված թվով **14**, Սիսիանում՝ **3**, և Մեղրիում թվով **6** շահառու մասնակցել են «Սպիտակի երկրաշարժի 31-րդ տարելիցին» նվիրված հիշատակի միջոցառումներին:
- 07.12.2019թ. Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային մարմնի աշխատակիցները և մարմնում հաշվառված թվով **5** շահառու մասնակցեցին Սպիտակի ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակի 31-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը:
- Գեղարքունիքի մարզային մարմնում հաշվառված թվով **5** շահառու մասնակցել են Մարտունի քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցած հանդիպմանը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների հետ: Հանդիպման ընթացքում հարց ու պատասխանի միջոցով քննարկվեցին իրավական, առողջապահական, գյուղատնտեսական և սոցիալական ոլորտներին առնչվող բազմաթիվ հարցեր:
- 20.11.2019թ. Պրոբացիայի ծառայության պետ Գևորգ Սիմոնյանի և Երևանի քաղաքային բաժնի պետ Վահրամ Խալաթյանի կողմից կազմակերպվել է վերասոցիալականացման ծրագրով նախատեսված Երևանի քաղաքային բաժնում հանրային աշխատանքներ պատժատեսակով հաշվառված թվով **13** շահառուների անհատական ընդունելություն: Շահառուների ընդունելության նպատակն էր պարզել նրանց կողմից պատժի կրման կարգն ու պայմանները, ևս մեկ անգամ պարզաբանել իրենց իրավունքները և իրենց վրա դրված պարտականությունները, դրանց չկատարման հետևանքով օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունը:

3. Համագործակցության հուշագրերի ստորագրում

- 1) 18.03.2019թ. ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանի և Պրոբացիայի ծառայության Շիրակի մարզային բաժնի պետ Զորակ Խաչատրյանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր: Հուշագրի շրջանակում Շիրակի մարզպետարանն ու պրոբացիայի ծառայության Շիրակի մարզային բաժինը պարտավորվել են համագործակցել անչափահասների հիմնախնդիրների լուծման հարցում:
- 2) 19.03.2019թ. Պրոբացիայի ծառայության և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագրի շրջանակում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան Պրոբացիայի ծառայությունում հաշվառված **20** շահառու հնարավորություն ունեն ներկա գտնվելու Եվրո-2020-ի ընտրական փուլի Հայաստանի ազգային հավաքականի բոլոր տնային հանդիպումներին:
- 3) 13.05.2019թ. Պրոբացիայի ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի և Վայոց ձորի մարզպետարանի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի միջև ստորագրվել է համագործակցության մասին հուշագիր: Հուշագրի շրջանակներում Վայոց ձորի մարզային բաժնում հաշվառված պրոբացիայի շահառուները հնարավորություն ունեն ներգրավվելու մարզպետարանի ենթակայության ներքո գործող մշակութային և սպորտային հաստատությունների տարբեր խմբակներում, ինչպես նաև մասնակցելու Եղեգնաձորի մշակույթի տանը կազմակերպվող միջոցառումներին:
- 4) 20.06.2019թ. Պրոբացիայի ծառայության Գեղարքունիքի մարզային բաժնի պետ Գեղամ Գրիգորյանի և «Կամավորներ հանուն բնության» հասարակական կազմակերպության նախագահ Էդվարդ Խաչատրյանի միջև ստորագրվել է համագործակցության մասին հուշագիր: Հուշագրի շրջանակներում կողմերը պարտավորվել են իրենց հնարավորության սահմաններում աջակցել միմյանց՝ Գեղարքունիքի մարզի հանրային տարածքներում պարբերաբար իրականացվող աղբի մաքրման աշխատանքներում:
- 5) 20.06.2019թ. Պրոբացիայի ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի և Եղեգնաձորի մարզադպրոցի միջև ստորագրվել է համագործակցության մասին հուշագիր, որի շրջանակներում հնարավորություն կնձեռնվի պրոբացիայի շահառուներին ներգրավել տարբեր մարզական խմբակներում, ինչպես նաև ծառայության և մարզադպրոցի կողմից համատեղ կազմակերպվող ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի մրցումներին:
- 6) 24.06.2019թ. Պրոբացիայի ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի և «Եղեգնաձորի կանանց ռեսուրս կենտրոն-հիմնադրամ» հասարակական կազմակերպության միջև ստորագրվել է համագործակցության մասին հուշագիր, որի շրջանակներում ՀԿ-ի հոգեբանների կողմից անհրաժեշտության դեպքում պրոբացիայի շահառուներին կցուցաբերվի հոգեբանական օգնություն: Հոգեբաններ կներգրավվեն նաև շահառուների հետ իրականացվող ընթացիկ աշխատանքներում:
- 7) 08.10.2019թ. Պրոբացիայի ծառայությունը և «Հոգեբանների հայկական գիտական միավորում» հասարակական կազմակերպությունը և հասարակական

կազմակերպության կողմից իրականացվող «Խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական հայկական կենտրոն» ծրագրի տնօրեն Դավիթ Գևորգյանը, նպատակ ունենալով խթանելու Հայաստանում պրոբացիայի ոլորտի բարեփոխումների իրականացումը՝ շահառուներին անհրաժեշտ վերականգնողական ծառայություններ տրամադրելու և վերասոցիալականացմանը նպաստելու միջոցով, կնքեցին Համագործակցության հուշագիր:

4. Միջազգային փորձի փոխանակում

- 1) 25.03.2019թ. և 26.03.2019թ. Պրոբացիայի ծառայության աշխատակիցներն աշխատանքային գործնական հանդիպումներ են ունեցել Նիդերլանդական Հելսինկյան կոմիտեի փորձագետներ Լեո Տիգեսի և Սթեֆան Պիթսի հետ: Հանդիպման նպատակն էր պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում փորձի փոխանակումը, առկա խնդիրների և դրանց լուծումները գտնելու հարցերի քննարկումը:
- 2) 27.03.2019թ. կայացել է «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի հանդիպում-քննարկումը՝ պրոբացիայի ինստիտուտի կայացմանն ուղղված պետական ռազմավարական ծրագրի վերաբերյալ, որին մասնակցել են ոլորտում մասնագիտացած ՀԿ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչներ Լեո Տիգեսը և Սթիվեն Պիթսը:
- 3) 22.05.2019-23.05.2019թ. Երևանում անցկացվել է «Պրոբացիայի ծառայության էությունը, խնդիրները, զարգացման հնարավորությունները՝ գերմանական փորձի հիման վրա» աշխատաժողովը, որն իրականացվել է միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) աջակցությամբ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Պրոբացիայի ծառայության հետ համագործակցությամբ:
- 4) 27.05.2019թ. Պրոբացիայի ծառայություն է այցելել միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) Հարավարևելյան Եվրոպայի Հարավային Կովկասի բաժնի ղեկավար Ֆրանկ Հուֆֆելդի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են պրոբացիայի ծառայողների վերապատրաստմանը և ուսումնական այցերին վերաբերող մի շարք հարցեր:
- 5) 25.06.2019թ. Նիդերլանդների Հելսինկյան կոմիտեի փորձագետներ Լեո Տիգեսը և Սթեֆան Պիթսը հերթական անգամ այցելել են Պրոբացիայի ծառայություն: Աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են Պրոբացիայի ծառայության զարգացման ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև պրոբացիայի համակարգի կայացման գործում տարբեր գերատեսչությունների համագործակցության կարևորությունը:
- 6) 15.07.2019-17.07.2019թ. «Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղը ԱՄՆ պետդեպարտամենտի՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և

իրավապահ համագործակցության բյուրոյի ֆինանսավորմամբ և ՀՀ արդարադատության նախարարության հետ գործընկերությամբ իրականացվող «ՀՀ պրոբացիայի ծառայության աջակցության ծրագրի» շրջանակներում կազմակերպել էր 3-օրյա խորացված դասընթաց Պրոբացիայի ծառայության Երևանի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Սյունիքի և Վայոց ձորի մարզային բաժինների 32 աշխատակիցների համար:

- 7) 04.10.2019թ.-12.10.2019թ. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալ Էդգար Ավագյանը մասնակցել է ք. Հաագա, Նիդերլանդների Թագավորությունում կայացած, «Ազատությունից զրկում և այլընտրանքային պատժամիջոցներ» Մաթրա իրավունքի գերակայության ծրագրի դասընթացին, որը կազմակերպվել էր Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի, Լեյդենի իրավաբանական դպրոցի Հաագայի տեղական կառավարման ակադեմիայի կողմից: Դասընթացի ընթացքում ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները՝ ազատությունից զրկումը և այլընտրանքային պատժամիջոցները, Նիդերլանդներում բանտային գործնական փորձը, մարդու իրավունքները, երեխաների ազատությունից զրկելը արդարադատական համակարգում, հոլանդական պրոբացիայի համակարգը, հանրային աշխատանքները, երեխաների հատուկ կարիքները ազատազրկման վայրում և Եվրոպայի մասնագիտական բանտային գործնական փորձը, նորարարությունը, մարդու իրավունքի պաշտպանության և արդարադատության կիրարկումը և մասնագիտացված աջակցության ծառայությունը, գնահատումը և վերադարձի գործողությունների պլանը:
- 8) 14.09.2019թ.-19.09.2019թ. «Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ»-ի (IRZ) կողմից ուսումնասիրության և փորձի փոխանակման ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման նպատակով Պրոբացիայի ծառայության պետը, պետի տեղակալը, Երևան քաղաքի տարածքային մարմնի պետն, ինչպես նաև Սյունիքի, Լոռու, Արարատի մարզային մարմնի պետերը մեկնել են Գերմանիայի Դաշնություն:

5. Պրոբացիայի ծառայողների աշխատանքային հանդիպումներ

- 1) 13.02.2019թ. Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժնի և Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի միջև կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են պրոբացիայի շահառուների կարիքների գնահատման, սոցիալական աջակցությանը վերաբերող հարցեր, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու կառույցների հետագա համագործակցության և փորձի փոխանակման համար:
- 2) 15.02.2019թ. Պրոբացիայի ծառայության Վայոց Ձորի մարզային բաժնի կողմից «ԱՇԽԱՏԱՆՔ և ՀԱՅՐԵՆԻՔ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ «Վայք Ինֆոտուն» ծրագրի աջակցությամբ Վայոց ձորի մարզում գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ կազմակերպվել էր հանդիպում՝ պրոբացիայի ծառայության

աշխատանքի լուսաբանման և հասարակության մեջ ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների համատեղ մշակման և այդ ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների կազմակերպումը քննարկելու նպատակով:

- 3) 21.02.2019թ. Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետերը մասնակցել են ՀՀ արդարադատության նախարարությունում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպված քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նախագծի քննարկմանը:
- 4) 27.02.2019թ. «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի (Ցանց) անդամների հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են պրոբացիայի ծառայության՝ Ցանցի կողմից իրականացվող մշտադիտարկման ընթացքը, պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացին առնչվող խնդիրներ, ինչպես նաև Ցանցի և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության այլ գործնական հարցեր:
- 5) 28.03.2019թ. Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժնի և Սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել էր հանդիպում-քննարկում Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժնում հաշվառված պրոբացիայի անչափահաս շահառուների վերասոցիալականացմանն ուղղված ծրագրերի իրականացման շրջանակներում շահագրգիռ կազմակերպությունների հետ հետագա համագործակցության հարցերի շուրջ:
- 6) 26.04.2019թ. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանը հանդիպել է Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի և տարածքային ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ծառայության որակի բարելավմանն ուղղված քայլերը:
- 7) 03.05.2019թ. «Փի-Էյչ Ինթերնեշնլ» ամերիկյան կազմակերպության հայկական մասնաճյուղն իր կողմից իրականացվող «ՀՀ պրոբացիայի ծառայության աջակցության ծրագրի» շրջանակում Պրոբացիայի ծառայությանը տրամադրել է նոր տեխնիկական սարքավորումներ, որոնց օգտագործումը թույլ է տալիս պրոբացիայի ծառայության աշխատակիցներին ավելի արդյունավետորեն և արագ կազմակերպել իրենց գործառույթները:
- 8) 15.05.2019թ. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանն աշխատանքային հանդիպում է անցկացրել Պրոբացիայի ծառայության պետ Արսեն Նավասարդյանի և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ տնօրեն Արտակ Կիրակոսյանի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Պրոբացիայի ծառայության կողմից դատարան ներկայացվող խորհրդատվական զեկույցների բովանդակային փոփոխություններին առնչվող մի շարք հարցեր:
- 9) 30.05.2019թ. անցկացվել է «Քայլ դեպի արդար Հայաստան» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի կլոր սեղան-քննարկումը՝ «Հայաստանում պրոբացիայի ընկալումը և պայմանական վաղաժամկետ ազատման խնդիրները» թեմայով:

- 10) 08.06.2019թ. Պրոբացիայի ծառայության աշխատակիցները մասնակցել են համապետական շաբաթօրյակին:
- 11) 27.06.2019թ. Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժինը Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ համատեղ, համագործակցության շրջանակներում բաժնում հաշվառված 5 շահառուի մասնակցությամբ Սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնի դահլիճում կազմակերպել էր հանդիպում: Հանդիպման նպատակն էր լուծել Պրոբացիայի ծառայության Լոռու մարզային բաժնում հաշվառված չաշխատող շահառուների զբաղվածության խնդիրը:
- 12) 25.09.2019թ. ՀՀ պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի և Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի միջև կնքվեց համագործակցության հուշագիր:
- 13) 31.10.2019 թ. Սյունիքի մարզային ծառայության աշխատակիցները մասնակցել են «Խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական հայկական կենտրոնի» կողմից անցկացված խորհրդակցությանը, որի նպատակն է ցուցաբերել համակողմանի ֆիզիկական, հոգեբանական ու սոցիալական աջակցություն խոշտանգում ու այլ դաժան և անմարդկային վերաբերմունք վերապրած անձանց և նրանց ընտանիքներին:
- 14) 13.12.2019թ. Պրոբացիայի ծառայության պետը և ծառայության աշխատակիցները մասնակցել են Հայ-Ռուսական համալսարանում կայացած «Պրոբացիայի ինստիտուտի զարգացման հեռանկարները և արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտաժողովին:
- 15) 18.12.2019թ. Պրոբացիայի ծառայության պետը և ծառայության աշխատակիցները հանդիպել են ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանի, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Վիգեն Քոչարյանի և ՀՀ Դատական դեպարտամենտի ղեկավար Կարեն Փոլադյանի հետ: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել երկու կառույցների դատական ոլորտում առկա խնդիրները, օրենսդրական բարեփոխումները, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերը և հետագա փոխհամագործակցության ուղղությունները:
- 16) 19.12.2019թ. Պրոբացիայի ծառայության ներկայացուցիչները ծառայության պետ Գևորգ Սիմոնյանի գլխավորությամբ հանդիպել են ԵԽ գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովայի և ԵԽ այլ աշխատակիցների հետ:
- 17) 20.12.2019թ.-21.12.2019թ. Ծաղկաձորում ԱՄՆ Դեսպանատան՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի աջակցությամբ «ՀՀ պրոբացիայի ծառայության աջակցության ծրագրի» շրջանակներում կազմակերպվել էր 2-օրյա հանդիպում-քննարկում Պրոբացիայի ծառայության աշխատակիցների համար, որտեղ ներկայացվեց նոր գործիքակազմը:

6. Տեխնիկական վերազինմանն ուղղված աշխատանքներ.

- 1) 2019 թվականի ժամանակահատվածում ծառայությունը վերազինվել է համակարգիչներով և տպիչներով:
- 2) Ավարտվել է Պրոբացիայի ծառայության պաշտոնական կայքէջի՝ probation.am-ի, պատրաստման վերջնական աշխատանքները և այն պարբերաբար թարմացվում է:

7. Ընթացիկ աշխատանքներ

- 1) Պրոբացիայի ծառայության մարզային մարմիններում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով Պրոբացիայի ծառայության պետը, տեղակալները և ստորաբաժանման ղեկավարները գործուղվել են ծառայության թվով 9 (Սյունիք, Վայոց ձոր, Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Կոտայք, Լոռի, Շիրակ, Տավուշ) մարզային մարմիններ:
- 2) ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում մշտապես ստացվում են դատարանի դատավճիռներ, որոշումներ, որոնց հիման վրա դատապարտյալները հաշվառվում են ծառայությունում, հանվում են ծառայության հաշվառումից: Նրանց վերաբերյալ կազմվում է անձնական գործեր:
- 3) Ծառայության աշխատակիցները մասնակցում են դատարան ներկայացված միջնորդությունների քննություններին: